

կաց փուռերը տեսնելով առաջին անգամ էվէրէկի մէջ հասարակաց փուռ մը շինած է եւ հաց եփել տուած է :

« Ասկէ յետոյ էր որ սովորութիւն եղած է հացերը փուռերու մէջ եփել : »

Հ Ա 8

էվէրէկի ու Ֆէնէսէի մէջ հացը կ'եփուէր թաղային փուռերու մէջ :

Այս փուռերը միայն տունի դործածութեան հացի համար բացուած էին : Ասկէ դատ շուկաներուն մէջ կային փուռեր որոնք թէ տնական եւ թէ շուկայի պատրաստ հաց, Սիւլիս, բոկեղ ու համադամ խորովածներ կ'եփէին :

Մասնաւոր արարողութիւն էր հացի թխումը :

Տանտիկինը ծունկի եկած եւ թեւերը սոթտած կը շաղուէր խմորը :

Նախորդ խմորէն մնացած թթխմորը (մայա) գաղջ ջուրով կը թրջուէր ու կը խառնուէր նորին : Տաշտի կամ կոնքի (լէկէն) մէկ ծայրէն կը սկսէր շաղումը մինչեւ որ աստիճանաբար հասնէր փափաքուած թանձրութեան : Փոքրիկներ պատրաստ կը սպասէին պարբերաբար ջուր լեցնելու համար :

Լրանալէ ու խմորի երեսը ողորկուելէ վերջ խաչ մը կը դրոշմուէր, ալիւր կը ցանուէր թեթեւօրէն ու կը ծածկուէր :

Կէս գիշերին, ժամանակէն առաջ, շատ անգամ խմորը կը քացփսէր, ու ստիպուած կ'ըլլային ալիւր խառնել ու դարձեալ շաղուել խմորումը յապագեցնելու նկատակով :

Երբեմն շատ կանուխէն կ'արթնցնէին հացագործը ու խմորը կը տանէին փուռը :

Կիներ շալակով, սէլէներու վրայ դրած, կամ հացի տաշտի սանդուխը երկու հողիով պատգարակի պէս բռնած կը կրէին խմորը :

Եփուելէ վերջ, հացը պաղած ու սէլէին մէջ շարուած տուն կը բերուէր, ճամբան մէկէ աւելի անգամ կանդ աննելով ու ծանօթներու կտոր կտոր քազէ հաց բաժնելով :

Մինչ այդ փուռերու ընդհանրացումը, կանայք հացը եփած են տան թոնիրին մէջ :

Ձարմանալիօրէն էվէրէկի շրջակայքի թուրք գիւղերը մինչեւ վերջ լաւաշ կ'եփէին իսկ հայերը թոնիրի հաց :

Թոնիրը վառուելէ ու կրակը հանդարտելէ ետք՝ տանտիկինը